ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.02.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 14/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով Արամ Հարությունյանի 03.02.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-14/17 բողոք) և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և ԳԲԽ-14/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 20.02.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. Արամ Հարությունյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 03.02.2017թ. ներկայացրած բողոքով Արամ Հարությունյանը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Երևան քաղաքի փողոցների, հրապարակների և այգիների կահավորման նպատակով աղբամանների և նստարանների ձեռքբերման և տեղադրման նպատակով «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգը

(այսուհետ նաև՝ Ընթացակարգ) կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանված պահանջների խախտմամբ:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգի՝ հայտերը կազմվում, իսկ մրցույթները հայտարարվում և հրապարակվում են համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգի:

Գնումների նախապատրաստման նպատակով իրավասու կազմակերպությունը՝ պատվիրատուն, գնումների պլանում ներառված գնման յուրաքանչյուր առարկայի համար գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու նպատակով սահմանում է պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող:

Պատվիրատուն, ի դեմս պատասխանատու ստորաբաժանման, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան ներառում է գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում, գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Արամ Հարությունյանը մեջբերել է Օրենքի 14-րդ հոդվածի 7րդ մասը և Կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետը:

Ելնելով վերոգրյալից՝ Արամ Հարությունյանը նշել է, որ «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով մրցույթի հրավերը հրապարակվել է տեղեկագրում 20.10.2016թ., իսկ գնումների պլանը հրապարակվել է 25.11.2016թ. /լրացվում է թերություններով, բացթողումներով, թերի և այլն/, որով խախտվել է ՀՀ գնումների մասին Օրենքի հոդված 14-ի պահանջը, ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգը և այլն:

«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով հայտարարված մրցույթի վերաբերյալ Գնումների աջակցման կենտրոնում քննվել է ԳԲԽ-123/16 բողոքը, որն ունի նույն հիմքերը, ինչ որ «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով հայտարարված մրցույթը: ԳԲԽ-123/16 բողոքը բավարարվել է գնումների բողոքարկման խորհրդի կողմից:

Արամ Հարությունյանը մեջբերել է նաև Օրենքի 14-րդ, 3-րդ, 6-րդ, 24-րդ հոդվածները և Կարգի 4-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ կետերը:

Ելնելով վերոգրյալից՝ Արամ Հարությունյանը խնդրել է՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲԸԱ՝ՊՁԲ-17/1» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի, ապօրինի հայտարարել և դադարեցնել «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով մրցույթի հայտարարելու, հրապարակելու մասին որոշումները, իսկ պայմանագիր և լրացուցիչ համաձայնագիր կնքած լինելու դեպքում պայմանագիրը և լրացուցիչ համաձայնագիրը հայտարարել ապօրինի, որի արդյունքում «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ընթացակարգը հայտարարվի չկայացած և կիրառել ժամանակավոր միջոց՝ դադարեցնել լրացուցիչ համաձայնագրերի կնքումը մինչև սույն բողոքի ավարտը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Կենտրոնը 06.02.2017թ. թիվ 01/04.1/349-17 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին և խնդրել՝ եռօրյա ժամկետում ներկայացնել «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Ի պատասխան Կենտրոնի 06.02.2017թ. թիվ 01/04.1/349-17 գրության՝ Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.02.2017թ. թիվ 02/61-7182Հ գրությամբ Արամ Հարությունյանի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ներկայացրած անձի հղում կատարելը ԳԲԽ-123/16 որոշմանը՝ պահանջելով «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել ապօրինի և այն հայտարարել չկայացած անհիմն է, քանի որ Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Պատվիրատուն տեղեկացրել է, որ 28.12.2016թ. Երևանի քաղաքապետարանի և «Նիկոլ Դուման» ԱԿ-ի միջև «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կնքվել է պայմանագիր, իսկ սույն թվականի հունվարի 13-ին՝ պայմնագրով նախատեսված գնման առարկայի մատակարարման դիմաց վճարումներ իրականացնելու նպատակով, կողմերի միջև օրենքով սահմանված կարգով կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

Պատվիրատուն տրամադրել է նաև «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

3. ԳԲԽ-14/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 20.02.2017թ. եզրակացությունը և առաջարկել է Արամ Հարությունյանի 03.02.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

4. ԳԲԽ-14/17 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-14/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի փողոցների, հրապարակների և այգիների կահավորման նպատակով աղբամանների և նստարանների մասնակի և ամբողջական վերանորոգման աշխատանքների

ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Երևանի քաղաքապետարանի կողմից 2016թ. գնումների փոփոխված պլանը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում ***25.11.2016թ.-ին***:

3. Պատվիրատուն Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակել է տեղեկագրում՝ www.gnumner.am համացանցային կայքում ***20.10.2016թ.-ին:***

4. Երևանի քաղաքապետարանի և «Նիկոլ Դուման» ԱԿ-ի միջև «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» գնման ընթացակարգի շրջանակներում կնքել է պայմանագիր, իսկ սույն թվականի հունվարի 13-ին՝ պայմանագրով նախատեսված գնման առարկայի մատակարարման դիմաց վճարումներ իրականացնելու նպատակով, կողմերի միջև օրենքով սահմանված կարգով կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով Արամ Հարությունյանի 03.02.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ Արամ Հարությունյանի 03.02.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է մասնակի բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գնումների պլանները հաստատվում են ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի: Դրանք հրապարակվում են տեղեկագրում, բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնումների նախապատրաստում.

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: ***Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է***: Եթե տվյալ տարվա ընթացքում, գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ ***գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը*** սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև ***<u>հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:***

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուի այլ միջոցների հաշվին իրականացվող ***գնումների պլանում փոփոխությունները կատարվում են <u>տվյալ գնումների պլանի հաստատման կարգով:</u>***

Կարգի 19-րդ կետի համաձայն՝ ***Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝*** ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ

պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիրը կնքվում է գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը պատվիրատուի ղեկավարը հաստատում է գնումների պլանը և յոթ աշխատանքային օրվա ընթացքում ***սահմանված կարգով հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:***

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի փողոցների, հրապարակների կահավորման նպատակով աղբամանների և նստարանների ձեռքբերման և տեղադրման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակվել է տեղեկագրում՝ www.gnumner.am համացանցային կայքում ***20.10.2016թ.-ին,*** իսկ 2016թ. գնումների փոփոխված պլանը հրապարակվել է ավելի ուշ՝ ***25.11.2016թ.-ին***:

Խորհուրդն արձանագրում է, որ Կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ նախ գնումների պլանավորում, հետո միայն գնումների նախապատրաստում.

Ավելին, համաձայն Կարգի 15-րդ կետի՝ ***գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է***, իսկ Կարգի 16-րդ կետի համաձայն՝ ***գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը հրապարակված գնումների պլանի առկայությունն է:***

Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում, Պատվիրատուն Ընթացակարգի հայտարարությունից ուշ հրապարակելով գնման պլանի փոփոխությունը, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ վկայակոչած պահանջները, ուստի ընթացակարգը ապօրինի հայտարարելու պահանջը ենթակա է բավարարման: Ինչ վերաբերվում է բողոքաբերի մյուս պահանջին, այն է՝ ապօրինի հայտարարել կնքված պայմանագրերը և լրացուցիչ համաձայնագրերը, ապա տեղեկացնում ենք որ Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ խորհուրդը այդպիսի լիազորություն չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արամ Հարությունյանի 03.02.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝

- Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել ապօրինի.
- մնացած պահանջների մասով Արամ Հարությունյանի բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Գրիգորյան**

Անդամ՝ **Արթուր Հովհաննիսյան**